# Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան
# 2014թ. հունվարին

(վերլուծություն)

2014թ. հունվարին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 10073 գործարք, որոնց քանակը 2013թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 44.9%-ով, իսկ 2013թ. հունվարի համեմատ աճել ` 1.3%-ով:

2014թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.




2014թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.




2014թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2877 օտարման գործարքների 76.8%-ը կազմել են առուվաճառքները, 22.7%-ը` նվիրատվությունները և 0.5%-ը` փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 41.4%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 41.4%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2014թ. հունվարին, 2013թ. դեկտեմբերի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 37.6%-ով, իսկ 2013թ. հունվարի համեմատ ՝ 7.0%-ով:

2014թ. հունվարին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 66.1%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2014թ. հունվարին, 2013թ. դեկտեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 14.1%-ով, իսկ 2013թ. հունվարի համեմատ աճել՝ 31.6%-ով:

2014թ. հունվարին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | հունվար 2013թ. | հունվար 2014թ. | դեկտեմբեր 2013թ. |
| **Կենտրոն** | 422050 | 428000 | 428000 |
| **Արաբկիր** | 350000 | 356600 | 356600 |
| **Քանաքեռ-Զեյթուն** | 279100 | 282700 | 282600 |
| **Նոր Նորք** | 243050 | 252000 | 252000 |
| **Ավան** | 255000 | 260000 | 260000 |
| **Էրեբունի** | 243500 | 250500 | 250500 |
| **Շենգավիթ** | 249100 | 256000 | 256000 |
| **Դավթաշեն** | 269100 | 275150 | 275000 |
| **Աջափնյակ** | 240050 | 249300 | 249300 |
| **Մալաթիա-Սեբաստիա** | 235000 | 242000 | 242000 |
| **Նուբարաշեն** | 145100 | 154750 | 154600 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2014թ. հունվարին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2013թ դեկտեմբերի համեմատ, աճել են 0.04%-ով:

2014թ. հունվարին մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 305 բնակարան, որոնց քանակը, 2013թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 38.5%-ով, իսկ 2013թ. հունվարի համեմատ աճել՝ 1.0%-ով:

2014թ. հունվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

| Մարզեր | Քաղաքներ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|---|
| | | **հունվար 2013թ.** | **հունվար 2014թ.** | **դեկտեմբեր 2013թ.** |
| Արագածոտն | Աշտարակ | 114000 | 115300 | 115200 |
| | Ապարան | 54000 | 57250 | 57200 |
| | Թալին | 62300 | 64900 | 64900 |
| Արարատ | Արտաշատ | 94200 | 95300 | 95250 |
| | Մասիս | 112000 | 115000 | 115000 |
| | Վեդի | 98500 | 100000 | 100000 |
| | Արարատ | 75100 | 75300 | 75300 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Արմավիր | Վաղարշապատ | 153200 | 154150 | 154150 |
| | Արմավիր | 119200 | 121200 | 121200 |
| | Մեծամոր | 86500 | 87500 | 87500 |
| Գեղարքունիք | Սևան | 99000 | 99200 | 99150 |
| | Գավառ | 58200 | 59800 | 59800 |
| | Մարտունի | 107400 | 107650 | 107600 |
| | Վարդենիս | 42050 | 44800 | 44800 |
| | Ճամբարակ | 26100 | 28700 | 28700 |
| Լոռի | Վանաձոր | 87200 | 88400 | 88400 |
| | Ստեփանավան | 74500 | 74500 | 74500 |
| | Սպիտակ | 99800 | 99800 | 99800 |
| | Ալավերդի | 54500 | 55000 | 55000 |
| | Տաշիր | 44100 | 47300 | 47300 |
| | Թումանյան | 11000 | 11000 | 11000 |
| | Շամլուղ | 8000 | 8000 | 8000 |
| | Ախթալա | 19800 | 20200 | 20200 |
| Կոտայք | Աբովյան | 153200 | 155100 | 155100 |
| | Նոր Հաճն | 128500 | 128600 | 128600 |
| | Բյուրեղավան | 107100 | 108150 | 108150 |
| | Եղվարդ | 109300 | 109300 | 109300 |
| | Հրազդան | 62500 | 63800 | 63800 |
| | Ծաղկաձոր | 292500 | 292500 | 292500 |
| | Չարենցավան | 84000 | 85500 | 85500 |
| Շիրակ | Գյումրի | 109300 | 109300 | 109300 |
| | Արթիկ | 66300 | 66500 | 66500 |
| | Մարալիկ | 40100 | 40700 | 40700 |
| Սյունիք | Գորիս | 117100 | 121800 | 121800 |
| | Կապան | 90200 | 92250 | 92250 |
| | Սիսիան | 89050 | 91150 | 91150 |
| | Մեղրի | 76200 | 80800 | 80800 |
| | Ագարակ | 44200 | 46850 | 46850 |
| | Քաջարան | 94300 | 94650 | 94650 |
| | Դաստակերտ | 8000 | 8000 | 8000 |
| Վայոց Ձոր | Վայք | 92500 | 95000 | 95000 |
| | Եղեգնաձոր | 119500 | 124850 | 124850 |
| | Ջերմուկ | 110500 | 112500 | 112500 |
| Տավուշ | Դիլիջան | 109100 | 113150 | 113150 |
| | Իջևան | 116200 | 118300 | 118300 |
| | Բերդ | 58050 | 60200 | 60200 |
| | Նոյեմբերյան | 46500 | 49900 | 49900 |
| | Այրում | 29000 | 31850 | 31850 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2014թ. հունվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2013թ. դեկտեմբերի համեմատ աճել են 0.06%-ով:

2014թ. հունվարին հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տների 316 առուվաճառքի գործարք, այդ թվում Երևան քաղաքում՝ 64, մարզերում միասին վերցրած՝ 252: 2014թ. հունվարին, 2013թ. դեկտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 40.4%-ով, ընդ որում Երևանում ՝ 59.5%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 32.3%-ով: 2013թ. հունվարի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 1.0%-ով, ընդ որում Երևանում նվազել ՝ 24.7%-ով, իսկ մարզերում միասին վերցրած աճել ՝ 10.5%-ով:

2014թ. հունվարին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների

(պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

| Վարչական շրջաններ | Միջին գները(դրամ) | | |
|---|---|---|---|
| | հունվար 2013թ. | հունվար 2014թ. | դեկտեմբեր 2013թ. |
| **Կենտրոն** | 471100 | 476100 | 476100 |
| **Արաբկիր** | 378100 | 383000 | 383000 |
| **Քանաքեռ Զեյթուն** | 291100 | 295000 | 295000 |
| **Նորք Մարաշ** | 314000 | 319200 | 319200 |
| **Ավան** | 267050 | 270500 | 270500 |
| **Էրեբունի** | 235000 | 239500 | 239500 |
| **Շենգավիթ** | 251000 | 255000 | 255000 |
| **Դավթաշեն** | 271700 | 276000 | 276000 |
| **Աջափնյակ** | 244100 | 250050 | 250050 |
| **Մալաթիա Սեբաստիա** | 234300 | 238000 | 238000 |
| **Նուբարաշեն** | 147600 | 150500 | 150500 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2014թ. հունվարին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2013թ. դեկտեմբերի համեմատ մնացել են անփոփոխ:

2014թ. հունվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով(ներառյալ տնամերձի միավորի գինը).

| Մարզեր | Քաղաքներ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|---|
| | | հունվար 2013թ. | հունվար 2014թ. | դեկտեմբեր 2013թ. |
| Արագածոտն | Աշտարակ | 135100 | 136200 | 136200 |
| | Ապարան | 58800 | 60050 | 60050 |
| | Թալին | 68650 | 69250 | 69250 |
| Արարատ | Արտաշատ | 98900 | 100000 | 100000 |
| | Մասիս | 114000 | 115100 | 115100 |
| | Վեդի | 101400 | 102300 | 102300 |
| | Արարատ | 87700 | 88000 | 88000 |
| Արմավիր | Վաղարշապատ | 152300 | 153100 | 153100 |
| | Արմավիր | 106500 | 107000 | 107000 |
| Գեղարքունիք | Սևան | 94200 | 94800 | 94800 |
| | Գավառ | 56700 | 57100 | 57100 |
| | Մարտունի | 94600 | 96100 | 96100 |
| | Վարդենիս | 39000 | 41000 | 41000 |
| | Ճամբարակ | 29850 | 31100 | 31100 |
| Լոռի | Վանաձոր | 98800 | 100000 | 100000 |
| | Ստեփանավան | 88400 | 90000 | 90000 |
| | Սպիտակ | 113600 | 114000 | 114000 |
| | Ալավերդի | 48300 | 50200 | 50200 |
| | Տաշիր | 51900 | 51900 | 51900 |
| | Թումանյան | 12000 | 12000 | 12000 |
| | Շամլուղ | 13200 | 14000 | 14000 |
| | Ախթալա | 29600 | 30000 | 30000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Կոտայք | Աբովյան | 154700 | 157000 | 157000 |
| | Նոր Հաճն | 129800 | 129800 | 129800 |
| | Բյուրեղավան | 120000 | 120500 | 120500 |
| | Եղվարդ | 116100 | 116100 | 116100 |
| | Հրազդան | 82400 | 82600 | 82600 |
| | Ծաղկաձոր | 305000 | 305000 | 305000 |
| | Չարենցավան | 82500 | 83000 | 83000 |
| Շիրակ | Գյումրի | 118000 | 118500 | 118500 |
| | Արթիկ | 63100 | 63100 | 63100 |
| | Մարալիկ | 51700 | 52000 | 52000 |
| Սյունիք | Գորիս | 129100 | 130000 | 130000 |
| | Կապան | 98700 | 100000 | 100000 |
| | Սիսիան | 93400 | 96500 | 96500 |
| | Մեղրի | 83000 | 84500 | 84500 |
| | Ագարակ | 46900 | 46900 | 46900 |
| | Դաստակերտ | 11610 | 11610 | 11610 |
| Վայոց Ձոր | Վայք | 89000 | 90050 | 90050 |
| | Եղեգնաձոր | 116600 | 116600 | 116600 |
| | Ջերմուկ | 129400 | 131300 | 131300 |
| Տավուշ | Դիլիջան | 111100 | 113000 | 113000 |
| | Իջևան | 122000 | 123200 | 123200 |
| | Բերդ | 59000 | 60100 | 60100 |
| | Նոյեմբերյան | 46100 | 48300 | 48300 |
| | Այրում | 34600 | 36250 | 36250 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2014թ. հունվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2013թ. դեկտեմբերի համեմատ մնացել են անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, 2014թ. հունվարին հանրապետությունում օտարվել է 847 միավոր (310.92 հա) հող, որից Երևանում՝ 91 միավոր (3.83 հա): Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 424 միավոր (273.18 հա), որից Երևանում՝ 3 միավոր (0.32 հա),
- բնակելի կառուցապատման հողեր՝ 303 միավոր (27.92 հա), որից Երևանում՝ 45 միավոր (1.29 հա),
- հասարակական կառուցապատման հողեր՝ 103 միավոր (7.53 հա), որից Երևանում՝ 37 միավոր (1.27 հա),
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 11 միավոր (1.83 հա), որից Երևանում՝ 6 միավոր (0.94 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 2 միավոր (0.15 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 4 միավոր (0.31 հա) ընդհանուր մակերեսով:

2014թ. հունվարին հանրապետությունում օտարված հողերից 687 միավորի (264.41 հա) նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 78 միավոր (3.08 հա), նվիրատվության գործարքներ՝ 158 միավորի (46.47 հա), որից Երևանում՝ 12 միավոր (0.74 հա) և փոխանակության գործարքներ՝ 2 միավորի (0.04 հա), որից Երևանում՝ 1 միավոր (0.01 հա):

Հանրապետությունում 2014թ. հունվարին, 2013թ. հունվարի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 27.0%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 36.4%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 15.9%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի

նկատմամբ՝ 15.4%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Կոտայքի մարզում՝ 55.14 հա, որից 50.60 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 24.0%-ը կամ 165 գործարքներ (32.88 հա) հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 46 միավոր (1.67 հա), իսկ 75.1%-ը կամ 516 միավորը (231.44 հա) հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 31 միավոր (1.40 հա): 2014թ. հունվարին հանրապետությունում գրանցվել են հողերի կառուցապատման իրավունքի վաճառքի 6 գործարք (0.08 հա):

Ստորև ներկայացվում է 2014թ. հունվարին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները.

| | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող | | | | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Գյուղատնտեսական նշանակության հողերի | | Արդյունաբերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | | Գյուղատնտեսական նշանակության հողերի | | Արդյունաբերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | |
| | | | | | բնակելի կառուցապատ (տնամերձ)հողերի | | հասարակական կառուցապատ. հողերի | | | | | | բնակելի կառուցապատ (տնամերձ) հողերի | | հասարակական կառուցապատ. հողերի | |
| | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ |
| Երևան | 0 | 0.00 | 4 | 0.86 | 21 | 0.09 | 21 | 0.73 | 2 | 0.14 | 2 | 0.08 | 17 | 0.90 | 10 | 0.27 |
| Արագածոտն | 8 | 15.44 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 7 | 0.38 | 31 | 32.98 | 0 | 0.00 | 13 | 1.32 | 3 | 0.19 |
| Արարատ | 17 | 3.36 | 0 | 0.00 | 4 | 0.22 | 1 | 0.01 | 57 | 27.98 | 0 | 0.00 | 34 | 3.21 | 3 | 0.05 |
| Արմավիր | 2 | 0.82 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 2 | 0.03 | 64 | 38.84 | 0 | 0.00 | 32 | 3.09 | 1 | 0.01 |
| Գեղարքունիք | 4 | 3.67 | 0 | 0.00 | 8 | 0.29 | 3 | 0.05 | 11 | 8.23 | 0 | 0.00 | 19 | 2.41 | 2 | 0.12 |
| Լոռի | 2 | 0.77 | 1 | 0.07 | 6 | 0.09 | 6 | 0.22 | 15 | 22.08 | 1 | 0.50 | 6 | 0.50 | 2 | 0.01 |
| Կոտայք | 4 | 0.63 | 1 | 0.14 | 9 | 0.64 | 2 | 0.02 | 65 | 49.97 | 0 | 0.00 | 32 | 2.77 | 10 | 0.79 |
| Շիրակ | 0 | 0.00 | 0 | 0.00 | 8 | 0.11 | 0 | 0.00 | 8 | 10.37 | 0 | 0.00 | 13 | 1.72 | 4 | 0.20 |
| Սյունիք | 1 | 0.66 | 2 | 0.18 | 3 | 0.21 | 2 | 0.69 | 11 | 11.72 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 1 | 0.02 |
| Վայոց Ձոր | 0 | 0.00 | 0 | 0.00 | 2 | 0.12 | 3 | 0.06 | 10 | 2.14 | 0 | 0.00 | 7 | 0.59 | 2 | 1.31 |
| Տավուշ | 0 | 0.00 | 0 | 0.00 | 4 | 0.25 | 3 | 1.78 | 9 | 2.41 | 0 | 0.00 | 18 | 4.46 | 0 | 0.00 |
| Ընդամենը | 38 | 25.35 | 8 | 1.25 | 65 | 2.02 | 50 | 3.97 | 283 | 206.86 | 3 | 0.58 | 191 | 20.97 | 38 | 2.97 |

Ստորև ներկայացվում է 2014թ. հունվարին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

| | Ուղղակի վաճառք | | | | | | | | Աճուրդ վաճառք | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը | | Արդյունաբերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | | Ընդամենը | | Գյուղ. նշանա-կության հողերի | | Գյուղ. նշանա-կության հողերի | | Բնակավայրերի հողեր | | | |
| | | | | | բնակելի կառուցապ. (տնամերձ) հողերի | | հասարակական կառուցապ. հողերի | | | | | | | | բնակելի կառուցապ. (տնամերձ) հողերի | | հասարակական կառուցապ. հողերի | |
| | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ |
| Երևան | 35 | 0.52 | 3 | 0.07 | 21 | 0.09 | 11 | 0.36 | 11 | 1.16 | 0 | 0.00 | 1 | 0.80 | 0 | 0.00 | 10 | 0.36 |
| Արագածոտն | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 11 | 3.67 | 4 | 3.29 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 7 | 0.38 |
| Արարատ | 1 | 0.01 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 1 | 0.01 | 21 | 3.58 | 17 | 3.36 | 0 | 0.00 | 4 | 0.22 | 0 | 0.00 |

| | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Արմավիր | 1 | 0.002 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 1 | 0.002 | 3 | 0.85 | 2 | 0.82 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 1 | 0.03 |
| Գեղարքունիք | 2 | 0.03 | 0 | 0.00 | 1 | 0.02 | 1 | 0.01 | 12 | 2.63 | 3 | 2.32 | 0 | 0.00 | 7 | 0.27 | 2 | 0.04 |
| Լոռի | 2 | 0.13 | 0 | 0.00 | 1 | 0.07 | 1 | 0.06 | 12 | 0.74 | 1 | 0.49 | 1 | 0.07 | 5 | 0.02 | 5 | 0.16 |
| Կոտայք | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 16 | 1.43 | 4 | 0.63 | 1 | 0.14 | 9 | 0.64 | 2 | 0.02 |
| Շիրակ | 4 | 0.02 | 0 | 0.00 | 4 | 0.02 | 0 | 0.00 | 4 | 0.09 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 4 | 0.09 | 0 | 0.00 |
| Սյունիք | 2 | 0.15 | 1 | 0.12 | 1 | 0.03 | 0 | 0.00 | 6 | 1.61 | 1 | 0.66 | 1 | 0.07 | 2 | 0.19 | 2 | 0.69 |
| Վայոց Ձոր | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 5 | 0.18 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 2 | 0.12 | 3 | 0.06 |
| Տավուշ | 3 | 0.25 | 0 | 0.00 | 3 | 0.25 | 0 | 0.00 | 4 | 1.78 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 1 | 0.002 | 3 | 1.78 |
| Ընդամենը | **50** | **1.11** | **4** | **0.19** | **31** | **0.48** | **15** | **0.44** | **105** | **17.72** | **32** | **11.57** | **4** | **1.08** | **34** | **1.55** | **35** | **3.52** |

2014թ. հունվարին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 6 գործարք (13.78 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2014թ. հունվարին, 2013թ. հունվարի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 37.9%-ով: Ընդ որում, Երևանում՝ աճել է 37.5%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ նվազել է 41.6%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 25.6%-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ՝ 44.3%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 41.7%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ աճել է 33.3%-ով :

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2014թ. հունվարին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

| Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միավորների քանակը | Մակերեսը (հա ) | արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ) | | | Միավորների քանակը | Մակերեսը (հա ) | արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ) | | |
| | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին |
| **Արագածոտնի մարզ** | | | | | | | | | | |
| Աշտարակ | 4 | 3.29 | 36.8 | 1021.4 | 292.8 | 20 | 10.62 | 365.0 | 12000.0 | 3520.0 |
| Ապարան | | | | | | 2 | 0.41 | 86.5 | 2727.3 | 714.5 |
| Թալին | | | | | | 1 | 1.57 | 93.6 | 5494.5 | 700.0 |
| Ծաղկահովիտ | | | | | | 7 | 15.44 | 79.5 | 1000.0 | 297.5 |
| **Արարատի մարզ** | | | | | | | | | | |
| Արտաշատ | 12 | 1.96 | 1191.2 | 9841.6 | 5937.0 | 29 | 11.14 | 335.1 | 10833.3 | 2653.0 |
| Մասիս | 3 | 0.29 | 160.0 | 1265.2 | 896.5 | 11 | 6.40 | 200.0 | 11904.8 | 2983.0 |
| Վեդի | 2 | 1.11 | 148.8 | 235.0 | 191.9 | 17 | 10.45 | 207.0 | 10795.1 | 1851.5 |
| **Արմավիրի մարզ** | | | | | | | | | | |
| Արմավիր | 2 | 0.82 | 84.0 | 84.0 | 84.0 | 35 | 17.51 | 294.3 | 9090.0 | 1237.2 |
| Բաղրամյան | | | | | | 6 | 3.86 | 90.6 | 2561.1 | 786.5 |
| Վաղարշապատ | | | | | | 23 | 17.47 | 444.4 | 11764.7 | 2175.5 |
| **Գեղարքունիքի մարզ** | | | | | | | | | | |
| Գավառ | 1 | 0.67 | 660.7 | 660.7 | 660.7 | 1 | 0.13 | 199.8 | 1875.0 | 430.0 |
| Ճամբարակ | | | | | | | | 60.5 | 953.3 | 355.2 |
| Մարտունի | | | | | | | | 51.1 | 2850.0 | 747.5 |
| Սևան | | | | | | 2 | 0.17 | 52.2 | 2134.8 | 328.5 |
| Վարդենիս | 2 | 1.65 | 60.5 | 178.2 | 119.4 | 8 | 7.94 | 41.2 | 2575.1 | 411.0 |
| **Լոռու մարզ** | | | | | | | | | | |
| Ալավերդի | 1 | 0.49 | 1244.4 | 1244.4 | 1244.4 | 2 | 1.70 | 170.4 | 6424.2 | 570.0 |
| Գուգարք | | | | | | 3 | 0.48 | 234.6 | 6065.9 | 792.0 |
| Սպիտակ | | | | | | 1 | 0.11 | 250.0 | 5555.5 | 730.8 |
| Ստեփանավան | | | | | | 4 | 4.25 | 90.6 | 1686.6 | 345.3 |
| Տաշիր | | | | | | 3 | 12.91 | 45.3 | 1384.4 | 171.0 |
| **Կոտայքի մարզ** | | | | | | | | | | |
| Աբովյան | 4 | 0.63 | 120.7 | 2565.9 | 1021.9 | 19 | 9.81 | 279.3 | 11942.7 | 4000.0 |
| Եղվարդ | | | | | | 38 | 35.87 | 174.4 | 11971.8 | 2403.1 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հրազդան | | | | | | 7 | 3.28 | 130.5 | 10256.4 | 1435.0 |
| Շիրակի մարզ | | | | | | | | | | |
| Ախուրյան | | | | | | 3 | 4.87 | 252.0 | 1693.1 | 631.5 |
| Ամասիա | | | | | | | | 40.9 | 261.0 | 126.8 |
| Անի | | | | | | 4 | 3.64 | 110.6 | 546.9 | 406.2 |
| Աշոցք | | | | | | | | 58.5 | 215.8 | 130.0 |
| Արթիկ | | | | | | 1 | 1.86 | 79.4 | 1428.6 | 438.5 |
| Սյունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գորիս | 1 | 0.66 | 263.6 | 263.6 | 263.6 | | | 92.6 | 1023.2 | 738.0 |
| Կապան | | | | | | | | 120.0 | 841.6 | 373.5 |
| Մեղրի | | | | | | 1 | 0.35 | 193.0 | 3000.0 | 740.0 |
| Սիսիան | | | | | | 10 | 11.37 | 46.3 | 1977.4 | 550.0 |
| Վայոց Ձորի մարզ | | | | | | | | | | |
| Եղեգնաձոր | | | | | | 1 | 0.16 | 125.0 | 10000.0 | 1940.0 |
| Վայք | | | | | | 6 | 1.14 | 58.8 | 1430.7 | 648.5 |
| Տավուշի մարզ | | | | | | | | | | |
| Բերդ | | | | | | | | 213.3 | 3783.8 | 690.0 |
| Իջևան | | | | | | 5 | 1.31 | 267.5 | 9454.5 | 1254.5 |
| Նոյեմբերյան | | | | | | 4 | 1.09 | 46.7 | 7368.4 | 915.5 |

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2014թ. հունվարին բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

| Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի աճուրդային վաճառքների | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ)հողերի վաճառքների | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միավորների քանակը | Մակերեսը (քմ) | արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով (հազար դրամ) | | | Միավորների քանակը | Մակերեսը(քմ) | արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով (հազար դրամ) | | |
| | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին |
| Արագածոտնի մարզ | | | | | | | | | | |
| Աշտարակ | | | | | | 11 | 11391.0 | 130.7 | 22200.0 | 2582.0 |
| Ապարան | | | | | | | | 124.1 | 609.6 | 390.0 |
| Թալին | | | | | | 2 | 1800.0 | 63.2 | 1454.8 | 152.3 |
| Ծաղկահովիտ | | | | | | | | 60.0 | 214.3 | 92.0 |
| Արարատի մարզ | | | | | | | | | | |
| Արտաշատ | 1 | 1985.9 | 344.5 | 344.5 | 344.5 | 10 | 12365.0 | 173.9 | 7140.3 | 899.5 |
| Մասիս | 3 | 203.4 | 3029.0 | 6001.2 | 4156.7 | 14 | 8871.2 | 187.5 | 25000.0 | 1206.4 |
| Վեդի | | | | | | 10 | 10829.0 | 126.1 | 5000.0 | 661.3 |
| Արմավիրի մարզ | | | | | | | | | | |
| Արմավիր | | | | | | 10 | 10433.0 | 131.6 | 9090.9 | 1213.4 |
| Բաղրամյան | | | | | | 4 | 3753.0 | 100.0 | 833.3 | 240.0 |
| Վաղարշապատ | | | | | | 18 | 16680.0 | 197.4 | 26528.4 | 1528.3 |
| Գեղարքունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գավառ | 1 | 615.0 | 190.2 | 190.2 | 190.2 | 3 | 1710.0 | 186.6 | 1084.3 | 683.5 |
| Ճամբարակ | | | | | | | | 71.3 | 2286.2 | 148.1 |
| Մարտունի | 4 | 1411.0 | 119.2 | 202.5 | 181.2 | 14 | 16105.7 | 119.3 | 5000.0 | 282.4 |
| Սևան | 1 | 188.9 | 372.8 | 372.8 | 372.8 | | | 240.0 | 3110.4 | 320.0 |
| Վարդենիս | 1 | 490.7 | 66.6 | 66.6 | 66.0 | 2 | 6258.8 | 72.5 | 987.2 | 150.0 |
| Լոռու մարզ | | | | | | | | | | |
| Ալավերդի | | | | | | 1 | 880.0 | 114.3 | 1388.9 | 217.0 |
| Գուգարք | 5 | 157.4 | 2202.8 | 2298.0 | 2279.2 | 4 | 2713.0 | 77.9 | 14083.3 | 1260.0 |
| Սպիտակ | | | | | | 1 | 1400.0 | 104.9 | 1348.3 | 206.5 |
| Ստեփանավան | | | | | | | | 88.2 | 1666.7 | 175.5 |
| Տաշիր | | | | | | | | 45.3 | 400.0 | 90.0 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Կոտայքի մարզ | | | | | | | | | | |
| Աբովյան | 3 | 1632.0 | 621.1 | 4977.0 | 2405.0 | 15 | 13825.9 | 264.5 | 35353.5 | 1991.0 |
| Եղվարդ | 6 | 4800.0 | 1912.5 | 1912.5 | 1912.5 | 13 | 9657.0 | 173.6 | 27000.0 | 2861.7 |
| Հրազդան | | | | | | 3 | 3193.0 | 117.7 | 34848.5 | 1318.0 |
| Շիրակի մարզ | | | | | | | | | | |
| Ախուրյան | 4 | 880.3 | 1980.0 | 6781.5 | 3560.0 | 6 | 6920.0 | 113.6 | 18750.0 | 333.7 |
| Ամասիա | | | | | | | | 45.3 | 274.7 | 71.0 |
| Անի | | | | | | 1 | 3500.0 | 67.9 | 180.6 | 181.0 |
| Աշոցք | | | | | | | | 40.8 | 144.0 | 64.0 |
| Արթիկ | | | | | | 6 | 6780.0 | 111.8 | 5000.0 | 217.7 |
| Սյունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գորիս | 1 | 778.0 | 425.3 | 425.3 | 425.3 | | | 112.2 | 1700.0 | 365.0 |
| Կապան | 1 | 1103.5 | 103.7 | 103.7 | 103.7 | | | 67.9 | 2638.9 | 307.5 |
| Մեղրի | | | | | | | | 68.5 | 632.9 | 220.0 |
| Սիսիան | | | | | | | | 123.5 | 875.0 | 218.5 |
| Վայոց Ձորի մարզ | | | | | | | | | | |
| Եղեգնաձոր | | | | | | 6 | 5310.0 | 96.7 | 7659.6 | 507.3 |
| Վայք | 2 | 1222.9 | 850.5 | 851.3 | 850.9 | 1 | 600.0 | 120.7 | 1448.3 | 232.0 |
| Տավուշի մարզ | | | | | | | | | | |
| Բերդ | | | | | | 1 | 1869.0 | 75.8 | 810.0 | 121.5 |
| Իջևան | 1 | 24.0 | 3000.0 | 3000.0 | 3000.0 | 16 | 41565.3 | 74.1 | 14423.1 | 515.0 |
| Նոյեմբերյան | | | | | | 1 | 1210.0 | 125.0 | 1948.1 | 230.0 |

2014թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 481 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.8%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 64.2%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2014թ. հունվարին, 2013թ. դեկտեմբերի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 42.6%-ով, իսկ 2013թ. հունվարի համեմատ ՝ 15.0%-ով:

2014թ. հունվարին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 30 բնակարանների, 49 անհատական բնակելի տների, 213 հասարակական, 45 արտադրական նշանակության օբյեկտների, 135 հողերի և 9 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2014թ. հունվարին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 1 վարձակալության գործարք, որոնց քանակը 2013թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 95.0%-ով, իսկ 2013թ. հունվարի համեմատ ՝ 92.9%-ով: 2014թ. հունվարին հանրապետությունում վարձակալված 406.11 հա հողերից 0.03 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 406.08 հա հողերից 373.49 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 0.42 հա արդյունաբերական օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Վայոց Ձորի մարզում՝ 295.26 հա, որից 295.18 հա գյուղատնտեսական նշանակության:

2014թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1007 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 10.0%ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2013թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 64.6%-ով, իսկ 2013թ. հունվարի համեմատ ՝ 12.6%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (48.9%), առանձնատների (26.0%), հասարակական նշանակության օբյեկտների (12.5%) և հողերի (7.7%) նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 505 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2013թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 66.2%-ով, իսկ 2013թ. հունվարի համեմատ ՝ 1.4%-ով:

2014թ. հունվարին հանրապետությունում գրավադրվել է 218.15 հա հող, որից 11.62 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 94.0%-ը կամ 205.03 հա գյուղատնտեսական

նշանակության են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 97.40 հա, որից 97.15 հա գյուղատնտեսական նշանակության:

2014թ. հունվարին հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 70 գործարք: 2014թ. հունվարին հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը 2013թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 63.2%-ով, իսկ 2013թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել ՝ 1.4%-ով:

Երևանում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 36 գործարք,որը 2013թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 70.5%-ով,իսկ 2013թ. նույն ժամանակահատվածի համեմատ ՝ 14.3%-ով: Մարզերում հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը 2013թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 50.0%-ով, իսկ 2013թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել՝ 33.3%-ով:

2014թ. հունվարին հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 977 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որոնց քանակը 2013թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 55.8%-ով, իսկ 2013թ. հունվարի համեմատ ՝ 17.6%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 9.7%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (23.2%):

**ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե**